ԺԱ.

Արդվին եւ Խատիլա:

Որջնհաղից (Որջոխից) դէպի հիւսիս Ճորոխը օձապտոյտ գալարումներով ուղղւում է դէպի արեւելեան–հիւսիս, ապա արեւմտա–հիւսիս մինչեւ Սինկոտի եւ Իսրայի խառնունքը, երեսուն կիլոմետրի չափ, որը կազմում է Արդվինի շրջանը: Այս շրջանում Շաւշէտ–Իմերխեւ վտակն աջից ընդունելուց յետոյ, ձախից ընդունում է Խատիլա վտակը, որը նոյնպէս 30 կիլոմետր երկարութիւն եւ ընդարձակ աւազան ունի:

Ճորոխը Կապաններից մտնում է Որջոխ ամրոցը, որ ո՛չ միայն անառիկ է, այլ անմերձենալի. իրար վրայ բարձրացած սրակող լեռները–ապառաժները որեւէ ծիր, ան էլ չունին անցնելու: Ահեղադոչ եւ սրընթաց Ճորոխը այդտեղ խոր ձորից այնպէս է անցնում, որ ափերին չի կարող մօտենալ որեւէ նաւակ, մակոյկ կամ տուփ եւ այդ տեսարանը բաւական է այնպիսի սարսափ սփռելու, որ ո՛չ ոք չի յանդգնի խուժել այդ երկիրը:

Որջոխից երկու կիլոմետր ցած աջից Ճորոխն են թափւում երկու առու — Գուրջան, Բէյջուր. ապա Վասիխսեւ եւ Գեավիլ առուները: Գեավիլի դէմ առ դէմ ձախից խառնւում է Ճորոխին Իշխալբուր (Իշխանբլուր), իր ոռոգած ընդարձակ այգեստան–